

# Ժողովուրդ

177  
(3027)

18 դեկտեմբերի չորեքշաբթի 2024  
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ ԳՈՐԸ ԿԱՐԳԻՆԱԼ, ՄԿԱՆՌԱԼԱՅԻՆ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՔԻՑ



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի կոռուպցիոն հակումները քննարկվել են կուսակցության վերջերս կայացած վարչության, ապա ակտիվի նիստում:

«Ժողովուրդ» օրաթերթի ԶԳ-ին մոտ կանգնած իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ երբ Արայիկ Հարությունյանի մասին բացահայտումներ են արվել ակտիվի նիստերից մեկի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը չի հավատացել, պահանջել է ներկայացնել փաստեր, որպեսզի չստացվի, թե Հարությունյանին օդում վարկաբեկում են: Մյուս նիստին ԶԳ-ական 2-3 պատգամավորներ ներկայացրել են հստակ փաստեր՝ փորձելով ապացուցել Նիկոլ Փաշինյանին, որ Արայիկ Հարությունյանը իրեն սխալ է ներկայացնում իրավիճակը, որ լինելով վարչապետի մոտ եզակի մուտք ու ելք ունեցող պաշտոնյաներից մեկը՝ հենց ինքը թաթախված է կոռուպցիայի մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթի ԶԳ-ական աղբյուրները փոխանցում են, որ դռնփակ նիստի ժամանակ թիմակիցները ներկայացրել են, թե երբեմնի դասախոս Արայիկ Հարությունյանը բարձրաստիճան կարեւորագույն պաշտոններում իր հավատարիմ մարդկանց է նշանակել ու վերահսկում է իրավիճակը կառավարական կաբինետում: Անգամ համեմատություն է արվել Նախկինների հետ, թե Նախկիններն էլ իրավիճակին չէին տիրապետում, որ Նախկինում էլ թիմակիցները ղեկավարներին խաբում, թալանով էին զբաղվում, դրա համար հասարակությունը դուրս եկավ նրանց դեմ:

Որպես ասվածի ապացույց՝ ներկայացվել է, որ Արայիկ Հարությունյանը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, որտեղ Կառավարությունը բաժնեմաս ունի, Նարեկ Բաբայանի հետ միանձնյա որոշում է՝ ով աշխատի, ով որքան աշխատավարձ ստանա, ով համագործակցի հանքի հետ, ով մերժվի: Ներկայացվել է զեկույց, որ եղբայրը «ձեռակալ» պաշտոն ունի «Հանքագործների միություն»-ում: Նույն Հարությունյանի եղբայրը հավակնում է դառնալ նոր մեդիամագնատ՝ Նախկինների օրինակով, եւ հեռուստատեսային-գովազդային շուկան կենտրոնացրել է իր ձեռքին՝ մեծացնելով ախորժակը, որ կուլ տա ողջ շուկան: Այսինքն՝ անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում մյուս հեռուստաընկերությունների համար:

Նիկոլ Փաշինյանին ներկայացվել է, որ վարչապետին առջև լինող տեսչական մարմինը, որ պետք է զբաղվի մի շարք հիմնարկների՝ այդ թվում եւ հանքերի վերահսկողությամբ, ղեղապետի ստուգումներով, մի շարք հիմնարկների աշխատանքային պայմանները ստուգելով՝ պատշաճ չի աշխատում, թաքցնում է շատ ճշմարտություններ վարչապետից:

Ներկայացվել է, որ կոռուպցիան վիստում է հենց վարչապետի քթի տակ՝ իր աշխատակազմում, եւ հորդում դուրս: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այդ նիստերից հետո Արայիկ Հարությունյանը շտապել է իր նշանակած կադրերին հրահանգել, որ աշխատեն մաքրել փաստաթղթերը, ամեն պահի պատրաստ լինեն արտահերթ ստուգումների: «Ազգային ժողովից բողոք կա իմ վրա, պիտի մաքրեք ձեր ոլորտը, թերությունները վերացնեք, որ ամեն պահի հնարավոր է՝ ստուգում լինի»,- իր նշանակած կադրերին ասել է Արայիկ Հարությունյանը:

**ԶԳ**-ն Նիկոլ Փաշինյանի հրահանգով Ասլանյանին հեռացրեց ոչ միայն խմբակցությունից, այլ նաեւ կուսակցությունից: Շախմատի տախտակի հաջորդ քայլը Հակոբ Ասլանյանին է. պետք է քայլ անի կամ ինչպես Հովիկ Աղազարյանը՝ դառնա անկախ պատգամավոր, կամ, որ ավելի նպատակահարմար է ԶԳ-ի համար, վայր դնի մանդատը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ ունեցվածք ունի ԶԳ-ից «աքսորված» Հակոբ Ասլանյանը. նա հայտարարագրել է 1986 թվականին Երեւանում ձեռք բերված բնակարան բազմաբնակարան շենքում: Ասլանյանի բանկային ավանդները կազմել են 1 մլն դրամ եւ 6 հազար ԱՄՆ դոլար: Հակոբ Ասլանյանը Նախորդ տարվա համեմատ ավելացրել է բանկային ավանդները 2 հազար դոլարով եւ 1 մլն դրամով: Պատգամավորի կանխիկ դրամական միջոցները պակասել են: Նախորդ տարի՝ 2023 թվականին, 1,5 մլն դրամը նվազել է 500 հազար դրամով: 2023 թվականի տարեկան եկամուտները կազմել են 11 մլն 576 հազար դրամ, որից 825 հազարը Ասլանյանը ստացել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, իսկ 10 մլն 751 հազար դրամը ԱԺ աշխատակազմից աշխատանքի վարձատրությունն է: 2022 թվականի համեմատ Հակոբ Ասլանյանի եկամուտներն ավելացել են գրեթե 2,5 մլն դրամով՝ 100 հազար դրամով ավելացել է պատգամավորի կենսաթոշակը, իսկ աշխատանքի վարձատրությունն ավելացել է 2 մլն 200 հազար դրամով: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մատուցողը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 400 հազար դրամ:



**ԶԳ**-ականները մինչ օրս ստիպում որոշներն էլ բարեկամաբար համոզում են Աղազարյանին, որ վայր դնի մանդատը եւ հեռանա խորհրդարանից: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԶԳ-ականների մի խումբ Հովիկ Աղազարյանին թուքումուր է տվել, պահանջել, որ վայր դնի մանդատը. ասել են, թե կատարվածից հետո, հատկապես նրանից, ինչ տեսել են Աղազարյանի հեռախոսում, ոնց է սստելու նույն դահլիճում ու իրենց հետ աշխատի, հարցեր քննարկի: Նախկին ԶԳ-ական Հովիկ Աղազարյանն էլ մի լավ տեղն է դրել իր երբեմնի թիմակիցներին, թե՛ «եթե չեք ուզում աշխատել ինձ հետ, կարող եք մանդատը դուք դնել ու գնալ ԱԺ-ից»:



**Ե**րեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Միքայել Խաչատրյանը անդրադարձել էր Երեւանում գովազդի նոր չափորոշիչների հետ կապված տնտեսավարողների կողմից առաջ քաշվող հարցերին՝ նշելով, որ սահմանված նորմերին չհամապատասխանող վաճառականները հանվել են եւ հետայսու նույնպես կապամոնտաժվեն: Եվ ահա այս իրավիճակի հետ չի հաշտվում «Աթենք» մամուլաթերթի խանութը: «Աթենք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից Հայկ Հայրապետյանը, Հայաստանի Հանրապետության վարչական դատարանից հայց է ներկայացրել ու խնդրել դատարանին՝ պարտավորեցնել պատասխանող կողմին ձեռնպահ մնալ Երեւան քաղաքի, Կիեյան 7 շենք 111 տարածքի հասցեում գտնվող «Աթենք ֆիրմային խանութ» գրվածքն ապամոնտաժելու գործողություններ կատարելուց: Միաժամանակ միջնորդել է կիրառել հայցի ապահովման միջոց, այն է՝ արգելել պատասխանողին կատարել Երեւան քաղաքի, Կիեյան 7 շենք 111 տարածքի հասցեում գտնվող «Աթենք ֆիրմային խանութ» գրվածքն ապամոնտաժելու գործողություններ՝ պատճառաբանելով, որ հայցի ապահովման միջոց չկիրառելն էական վնաս կատարածառի հայցվորին: Մասնավորապես, «Աթենք ֆիրմային խանութ» գրվածքի բացակայության պայմաններում անձինք չեն տեղեկանա, որ նշված հասցեում գտնվում է «Աթենք» ֆիրմային խանութը, որի արդյունքում չեն հաճախի տվյալ խանութը եւ ընկերությունը կկրի վնասներ: Բացի այդ, «Աթենք ֆիրմային խանութ» գրվածքը չի հանդիսանում արտաքին գովազդ, այլ խանութի գտնվելու մասին տեղեկացում է:















